

1800

Տ. Վ. Ա. ՆՅԱՆ

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ  
Պ Ա Տ Մ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

(ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ)

ՊՐԱԿ Ա.ՌԱԶԻՆ

9(4)

Վ-22

ՅԵՐԵՎԱՆ

1931

30 MAY 2011

3(4)  
4-22

ՊՐԻՆՏԱՐՆԵՐ ԲՈՒՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՅԵՔ


Հ. Ս. Խ. Հ. **ԿԱԴՐԵՐԻ ՍԵԿՏՈՐ** Ժ. Տ. Գ. Խ.  
**ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԶԱ**  
ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ՏԵԽՆԻԿՈՒՐ

Տ. ՎԱՆՅԱՆ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 1

# ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(19—20-րդ դարեր)



1800

Պոլիտարանի բարձր լեկտների, միացի՛ք.

Հ. Ս. Խ. Հ.

**Կ Ա Ղ Ի Ե Ր Ի Ս Ե Կ Տ Ո Ր**

Ժ. Տ. Գ. Խ.

**Հ Ե Ռ Ա Կ Ա Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Բ Ա Ջ Ա  
Հ Ե Ռ Ա Կ Ա Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն  
Ի Ն Դ Ո Ւ Ս Տ Ր Ի Ա Ն, Տ Ե Խ Ն Ի Կ Ո Ւ Մ**

**Տ. Վ Ա Ն Յ Ա Ն**

**Ա Ո Ս Ա Դ Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 1**

**Ա Ր Ե Վ Մ Տ Յ Ա Ն Յ Ե Վ Ր Ո Պ Ա Յ Ի Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն  
Յ Ե Վ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Զ Ա Ր Գ Ա Ց Ո Ւ Ս Ը  
Մ Ի Ն Զ Ե Վ, Ի Մ Պ Ե Ր Ի Ա Լ Ի Զ Մ Ը**

**Յ Ե Ր Ր Ո Ր Դ Կ Ո Ն Ց Ե Ն Տ Ը**


**Պ Ր Ա Կ Ա.**

ՊԵՏՏՐՈՍԻ ՏՊԱՐԱՆ

ԳԼԱՎԼԻՏ 6524 (Բ)

ՊԱՏՎԵՐ 3251

ՏԻՐԱԺ 300



Գրականութեան ցուցակում մատնանշված ձեռնարկներից  
1. Կուշներ—Հաս. ձևերի զարգացումը, և 2. Կ. Ղաղարյանի  
Քրեստոմատիան հանձնարարվում է միայն վորպես մատերիալ:  
Վերջին յերկու աշխատանքների ներածական մասերում կան մի  
շարք սխալ դրույթներ:

Ծանոթ. կազմողի



5077-Ձ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅԲԱՐԻ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՆՐԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՆ-  
ՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ԲԱՏԱՏՐԱԿԱՆ.

Դասակարգային պայքարի պատմութեան ուսումնասիրութեան  
նպատակն է՝ ուսանողներին սովորեցնել վերլուծել ժամանակա-  
կից գատակարգային պայքարի կոնկրետ ժամանակներն աշխատա-  
կող, վեր նրանք հիշող վերաբերմունք ունենան դեպի սեղի ու-  
նեցող հասարակական յերեմութներն ու անցքերը, վորոնց դոր-  
ծոն մասնակցողը պիտի լինի յուրաքանչյուր ուսանող էր առորյս  
կյանքում և գործնական աշխատանքներում, վորպես սոցիալիզմի  
կառուցող: Անցյալի ուսումնասիրութեան հիման վրա ուսանողը  
պետք է պատմական հեռանկարի պատկերացում մշակի, վորպես-  
զի հասարակական յերեմութները նրա մտքում կապված լինեն  
անցյալի և ապագայի հետ: Սովորողները պետք է վարժվեն պատ-  
մական պրոցեսն թմրանել դիալեկտիկորեն՝ «վոչ թե վորպես քա-  
րացած միութիւն, այլ իբրև հակադրութիւնների միասնակա-  
նութիւն, կոնկրետ դարգացման, վորոչ կովի մեջ յեղած փոխ-  
հարաբերութիւնների բազմակողմանի հաշվառումով, և վոչ թե  
մի կտոր աշտեղից վերցնելով, մի կտոր աշտեղից» (Լենին):  
Դասանթացի ծրագիրն ընդգրկում է Յեմպոպայի գլխավոր  
յերկրների, Հ.Ս.Մ.-ի, Արևելքի ժողովուրդների և ԽՍՀՄ-ի նորա-  
գուն պատմութիւնը: Կոնկրետ պատմական նյութի վրա ուսա-  
նողը պետք է թմրանի Մարքսի և Լենինի ուսմունքը գատակար-  
գային պայքարի և հեղափոխութեան մասին, ձեռք յերի պատ-  
մութիւն Մարքսիստական-Լենինյան վերլուծութեան ունակու-  
թիւն, թմրանի պատմական պրոցեսի սրինաչափութիւնը: Դա  
նրան կողմի հասկանալու պրորբմները, Հոկտեմբերյան և հա-  
մաշխարհային պրոլետարական հեղափոխութեան գարգացման  
անխուսափելիութեան կոնկրետ պայմանները և դրանից թղթող  
Համկոմկուսի և կոմիստերնի պրակտիկան և խնդիրները:

(Քաղվածք ծրագրի բացատրականից) :

Ծրագիրը բաժանված է 10 ստաճադրությունների և ունի յե-  
կու հիմնական մաս, իմպերիալիզմի նախապատերազմյան դարա-  
շրջանը մշակվում է 6 ստաճադրություններում, համաշխարհային  
սրտանբազմի և պրոլետարական հեղափոխության գաղափարները՝  
3 ստաճադրություններում և վերջապես ներածական մասը կազ-  
մում է մի ստաճադրություն :

Յուրաքանչյուր ստաճադրության վերջում մասնանշվում է  
արվող նյութի բանավոր և գրավոր ստուգման յենթակա մասերն  
ու սղրյունները :

Գրականությունը մասնանշելիս տրված են մեծ մասամբ  
յեղած հայերեն աղբյուրներ, աչքի առաջ ունենալով, վոր սո-  
վարդները մեծ մասը, —ինչպես ցույց են տալիս օւղարկված հայ-  
ցաթերթիկները, — լավ չի տիրապետում ուսուց լեզվին : Հոսե-  
նայն զեպս հայերեն գրականության հետ նշվում է նաև սո-  
սերեն աղբյուրներից անհրաժեշտ միևիմուտ :

Բ. ՆՊԱՏԱԿԸ ՅԵՎ ԽՆԻՒՐՆԵՐԸ .

Ինչ նպատակ է հետապնդում պատմությունը . ինչու է յե մեզ  
հարկավոր իմանալ անցյալը : Միտք ունի՞ արդյոք զբաղ-  
վել այն խնդրով, թե ինչ է յեղել սրանից 10, 100 կամ հազա-  
րամյակներ առաջ : Ահա այս բոլոր հարցերին պատասխանել է  
ու սրտասիրանվում է յերկու միանգամայն տարրեր ուղղությամբ :  
Հոկանմբերը ինչպես կյանքի բոլոր բնագավառներում, նույնպես  
և պատմության ասպարեիցում առաջ բերավ հիմնական բեկում,  
թույլ տալով մասաներին հետախուսել անցյալը գիտական միակ  
ճիշտ զենքի ոգնությամբ՝ մարքսիզմ-լենինիզմի զենքով և հիմ-  
նովին չըջել բուրժուադեմոկրատիայի ստեղծած պատմագրության մեթո-  
դոլոգիան և ելությունը : Այս կապակցությամբ դատարարգային  
պայքարի պատմությունը, իբրև դասավանդվող առարկա, Հոկ-  
անմբերի ծնունդ է :

Մարդիկ միշտ այնպես չեն ապրել ու դործել, ինչպես այժմ :  
Ամեն ինչ գործացել է ու փոխվել . հողազնչի վրա կյանքն իր ար-  
դի փրճակին հասել է անընդհատ փոփոխությունների ու պայ-  
քարի բովով հազարամյակների մի ահադին թվի րնթացում : Յե՛վ  
անցյալի ուսումնասիրությունը մեզ անհրաժեշտ է հենց նրա հա-  
մար, վոր հասկանանք ներկան, հասկանանք այն, ինչ վոր կա-

տարվում է մեր շրջապատում, ինչին մենք մասնակից ենք ու  
դործակից :

«Իսկ ով նախատեսում է սպազան, նա տիրապետում է սպա-  
զայի վրա, վորովհետև նախատեսելով սպազան, մենք կարող ենք  
սրտորատովել նրա համար, ձեռք առնել մեր միջոցները, վորպես-  
զի խոտավենք սպազա դժվարություններից և կարելի չեղածին  
չսփ յամապես սքոսիներ այն բարեխնությունից, վոր կրեքի մեզ այդ  
սպազան : Գիտենալ, նշանակում է կարենալ կամ տիրապետել :  
Սնցյալի իմացումը մեզ տալիս է այսպիսով, իշխանություն սպա-  
զայի վրա» (Պակրովսկի) :

Միլիոնավոր տարիներ մեզանից առաջ մեր մոլորակը ներ-  
կայացնում եր մի ահադին հրահեղուկ դունդ՝ շրջադառված մա-  
տիստոլոլ և դոլորչիով, վորևե կյանքի նշույլ չկար և չեք կա-  
րող լինել : Սակայն գրորվեցին անհիշելի հազարամյակներ, մի-  
լիոն տարիներ և ահա յերնկրագնդի կայունացող մակերեվույթի  
վրա արդեն կյանք սարմնավորվեց, յերկրի հակայական մասեր  
ծածկվեցին հարուստ բուսականությամբ, անանցանելի անտառ-  
ների և ստաճացան բազմաթիվ, բազմատեսակ կենդանիներ, վո-  
րոնց փոփոխված սերունդներն են հանդիսանում այժմյան կեն-  
դանին, այժմյան բույսերը :

Բուսական և կենդանական աշխարհի մնացորդների, բրա-  
ժոնների ուսումնասիրությունը մի կողմից, յերկրաբանությունը,  
պատմությունը, հնեաբանությունը մյուս կողմից, հենված դի-  
տականորեն սպացուցված և յերկրի շերտերից դուրս բերված  
բազմաթիվ փաստերի վրա, հիմնովին խորասկեցին այն միամտ  
ու միտումնավոր հեքյաթը, թե աշխարհը ստեղծված է յոթ ու-  
րում, մեկ աստված-արարչի կողմից, վորն ուսուցանում է աստ-  
վածաչունչը : Միտմանակ ջարդ ու փշուր արվեց այն վարդա-  
պետությունը, վորն տում է, թե աշխարհն անփոփոխ է, թե  
մարդկային հասարակությունը միշտ յեղել է և նշանակում է  
միշտ էլ կլինի այնպես, ինչպես վոր է այժմ . մի տեսակետ, մի  
ուսմունք, վոր ձեռնաու յե յեղել նրանց, վորոնք վայելում էլին  
բոլոր բարեքները նախկին հասարակության մեջ, վոր պաշտպան-  
վել ու քարոզվել և միայն բոլոր շահադործողների կողմից և հենց  
նրանց չահերի համար էլ ստեղծված է :

Դիտելով այն, ինչ տեղի ունի այժմ, կամ համեմատորար  
փոչ հետու անցյալում, մենք տեսնում ենք, վոր պատմական գար-  
դացման այդ բոլոր յերեվույթների միջև գոյություն ունի կապ  
և արինաչափություն, վոր պատմական շարժումը կատարվում է

հասարակական վորոչ դատակարգի ձևերով, վոր իր տրամադրու-  
թյան տակ ունի վորոչ տեսակի միջոցներ, արտադրութեան վոր-  
ոչ յեղանակ: Յերբ ամբողջ արդյունաբերութեանը դյուրացի-  
ներէ ձևերն եր, արտադրութեան մեջ դործադրվում եր բացա-  
ռապէս ձևերն աշխատանք, վոր միայն հասցն ու վորչն եր ստացվում  
դյուրից, ուր ամեն մեկն աշխատում եր իր հողարածնում, այլև  
արդյունաբերական ածխոյն ապրանքները՝ վորտեսանք, հա-  
ղուստեղները պատրաստվում եր նույնպէս առանձին-առանձին աշ-  
խատող բանվորներէ և արհեստավորներէ ձևերով: Այս ժամանակ-  
ներէ հոգատեղ ազնվականութեան դեմ ուղղված բոլոր տեսակի  
դյուրացիական հեղափոխութեանները, կատարված իրենց միջա-  
կը թեթեւացնելու նպատակով, վերջանում եյին պարտութեամբ  
և նրանց ուղեկցում եյին դաժան պատիժներ: Վարովհետև դյուրաց-  
ցիական արտադրութեանը դեմում եր ցած աստիճանի վրա,  
դյուրացիները ցրված եյին, մի ամբողջութեան չեյին կապում,  
աշխատում եյին անջատ-անջատ, այս պայմաններում նրանց միա-  
բանութեան ստեղծվել և զիտակցութեանն իր դատակարգային  
չափերէ բժշկման աստիճանի հասնել չեր կարող: Ընդհակառակը,  
նրանք իրենց տերերի կողմից ողորդվում եյին միմյանց դեմ:  
Ահա թէ ինչու նրանք իշխանութեան տեր դառնալ չկարողացան:

Մեքենայի մուտքը արտադրութեան մեջ հիմնովին փոխեց  
պատկերը: Նա կործանեց դյուրական անչարտութեանը, խփեց  
առանձին մենաստեղծարարներին և արհեստավորներին ու զրկելով  
նրանց իրենց հողից ու արտադրութեան միջոցներից, հագարներով  
համարվեց մեկ հարկի տակ, իրրև վարձու աշխատավորներէ  
մի վիթխարի բանակ և ստեղծեց արդի պրոլետարիներին: Այսպիս-  
տով, տնտեսական կովի միջոցներով, նյութական կյանքի հայ-  
թախման համար տարվող պայքարի նոր զենքերով, փոխվեց հին  
հասարակարգը, փոխվեց նրա արտադրական պրոցեսը և այդ պրո-  
ցեսում դրադված հասարակական տարբեր խմբակցութեաններ  
տարբեր դիրքերի հասան և տարբեր դատակարգերի բաժանվեցին:

Արտադրողական ուժերն իրենց զարգացման հայանի աստի-  
ճանի վրա հակադրվեցին արտադրութեան հին յեղանակին, վորոնք  
այլևս հետագա զարգացումն անհնարին եյին դարձրել և այդ բող-  
խումը վերջացավ հին հասարակարգի կործանումով ու բուրժուա-  
զիայի հաղթանակով և պատմութեան բեմը յիւրն նոր դատակար-  
գեր—բուրժուազիան և պրոլետարիատը: Արտադրական նոր ուժերի  
հետ արտադրութեան զլուխն անցած բուրժուազիան խորտակեց  
և ջարդ ու փշուր արավ համբարական կյանքի վողջ հետամնա-

ցութեանն ու «կուսութեանը» և ամեն ինչի տեղ միայն և «միայն  
մերկ շահ» դրեց:

Մտախոյն մեր ժամանակը—բուրժուազիայի շրջանը, նրանով  
և նշանակալի, վոր դատակարգերի հակադրութեաններին պարզ  
ձև և սովել: Ամբողջ հասարակութեանը բաժանված է յերկու մեծ  
թշնամի բանակների, յերկու մեծ, ուղղակի դեմ առ դեմ կանգ-  
նած, դատակարգերի—բուրժուազիայի և պրոլետարիատի» (Կ.  
Մարքս, Ֆ. Ենգելս, «Կոմ. մանիֆեստ»): Այսպիսով, պատմու-  
թեանը շարժվում է իրայն դատակարգերի կովի միջոցով:

«Բոլոր միևն այժմյան հասարակութեաններին պատմութեանը  
դատակարգային պայմարի պատմութեանն է: Ազատն ու ստրուկը,  
պատրիկն ու պլեբեյը, բարանն ու ճորտը, համբարն ու քարգլխա-  
լը, ճնշողն ու ճնշվածը միշտ ել իրար հակառակ են յեղել, ան-  
բնական պայքար են մղել իրար դեմ—մերթ դադանի, մերթ ալըն-  
հայտ մի պայքար, վոր կամ ամբողջ հասարակութեան վերանորո-  
գումով է վերջացել, կամ պայքարող դատակարգերի կործանու-  
մով» (Կ. Մարքս, Ֆ. Ենգելս՝ «Կոմ. մանիֆեստ»):

Բուրժուազիան կործանելով հին աշխարհը, միաժամանակ  
սրեց դատակարգային պայքարը և կոնց այն զենքերը, վորով նրա  
խի ձևերով ստեղծված պրոլետարիատն ուղղում է կապիտալիզ-  
մի դեմ, ի վերջո կործանում նրան:

Մարդու կոիքն իր կարիքների բախարարման համար, նրա  
զարգացման վողջ պատմական պրոցեսը կատարվում է բնութեան  
մեջ: Բնութեանը մարդկային հասարակութեան դոյութեան և գոր-  
ծունեյութեան նախադրմանն և հանդիսանում: Յերկրազնդի  
տարբեր վայրեր իրենց աշխարհադրական դիրքով ու բնական պայ-  
մաններով ազդել են տարբեր յերկրների զարգացման վրա և այս  
միջավայրում իր տնտեսութեանը կատարելով մարդը բնութեան  
ուժերի հանդեպ ունեցած պատիվ զիմադրութեանից աստիճանա-  
բար անցել և ախիվ զիմադրութեան, բնութեան ուժերի հաղթա-  
հարձան խնդրին՝ նրանց իր կարիքներին ծառայեցնելու նպատա-  
կով: Այս կոիքն այնքան ավելի ուժեղ է վնասում, վորքան նա կա-  
տարվում է ավելի կազմակերպված, արտադրական ուժերի զար-  
գացման ավելի բարձր աստիճանով: «Փոխելով բնութեանը, մար-  
դը փոխում է իր սեփական բնութեանը»— Մարքս:

«Բնութեան իշխանութեանը մարդու վրա անասման չէ: Բնու-  
թեան հետ մարդը կարող է հաշիվ տեսնել և տնտեսութեան հիմքը  
բնութեանն է: Բնութեանը միայն նյութ է՝ այդ տնտեսութեան

համար: Տնտեսության հիմքը մարդկային աշխատանքն է, վարքան ուղ աշխատանքը կատարել է, վարքան ավելի հաստատուկամ է և ճարտար, այնքան քիչ է մարդը կախված բնությունից» (Պակրոմակիր—«Ուրվագիծ սոցիալական պատմության»):

Քողարկելով պատմության դասակարգային էությունը, պատմությունը դուրս բերելով իրեն անհատներին խելքի ու հերոսությունը, իրեն հանրությունը և իշխանությունը ունեցող մարդկանց խելքի դուրծ, բուրժուազիան զբանով փորձում է քողարկել կապիտալիզմի ալյանդակ դեմքը և շահագործող բնույթն ու միտքն ընդամենը դասակարգային գիտակցությունը:

Սակայն պատմության յուրաքանչյուր դարի խիտ է հողուտ բանվոր դասակարգի վերջնական հաղթանակի:

Մեր դարն ինչպե՞ս ատանցքը կազմում է հենց կապիտալիզմի միջանկյալ և պրոլետարիատի ազատագրման պայքարի պատմությունը՝ նրա զարգացման բարձր փուլի վրա—խմբերի կողմից շրջանում, նրա արտահայտությունը սարքեր յերկրներում և նրա կործանումն աշխարհի մեկ վեցերորդ մասում, նախկին կայսերական Ռուսաստանում:

Սակայն նախքան խմբերի կողմից անցնելը, փորձենք ընդհանուր գծերով սույն պատմական զարգացման ընթացքը, հասարակական ձևերի զարգացումը և նրանց անընդհատ փոփոխությունները մինչև արդյունաբերական կապիտալիզմի ֆինանսական խմբերի կողմից վերածվելը:

Այս առաջադրությունն այդ խակ պատճառով տրվում է իրեն ներածություն:

Գրականության պարտադիր ցուցակ չի մատնանշվում: ցանկացողների համար հանձնարարվում է կարգով՝

1. Կուրներ—Հասարակական ձևերի զարգացումը (հայերեն):
2. Տյումենով—Աշխատանքի պատմություն (հայերեն):
3. Կոմունիստական Մանիֆեստ գրուխ առաջին, յերկրորդ:
4. О. Трахтеберг—«краткий курс по истории доиндустриальных формаций»
5. Կ. Ղազարյան—Քրիստոմատիա (Արևմտ. Յեփրոսյայի գառ. պայքարի պատմություն 19—20-րդ դարեր, սրակ՝ Ա.):
6. Фриндлянд—История зан. Европы изъ зан. т. I. лекции 1. 2. 4. 5. и 6.
7. К. Маркс—Капитал. т. I. гл. 24 (о первоначальном накоплении—պատրաստվածների հմր)

ՖԵՆՈԿԵԼԻԶՄԻ ԳԱՅՔԱՅՈՒՄՆ ՈՒ ԿԱՓԵՏԱԼԻ ՆԱՆՆԱԿԱՆ ԿՈՒՏԱԳՄԱՆ ԵՊՈՒՅՄԱՆ

Ամեն փոք, սպ ձևնարկում է Արևմտյան Յեփրոսյայի նորագույն շրջանի հեղափոխական շարժումների պատմության ուսումնասիրությունը, այսինքն՝ արդյունաբերական կապիտալիզմի և իմպերիալիզմի եպոխաները, անխուսափելիորեն իր առաջ հարց պիտի դնի, թե ի՞նչ ճանապարհ էր, վոք անցել են յեփրոսյայական ժողովուրդները, մինչ այն, յերր նրանք թեև կախված էին արդյունաբերական կապիտալիզմի փուլը և հասան իմպերիալիզմի:

ԱՐԵՎՄՏԱՆ-ՅԵՎՐՈՓԱԿԱՆ ՖԵՆՈԿԵԼԻԶՄԻ ՆՄԱԿՈՒՄԸ

Մեր դարադրվի սկզբում, այսինքն՝ մոտավորապես յերկու հարյուր տարի առաջ, արդի Յեփրոսյայի փոշ շարափարկման և արևմտյան մասը մտնում էր հոտմեյական հակառակ կայսրություն կազմի մեջ: Անընդհատ պատերազմների հետեփանքով Հոտմիր կարգապայ Տարտակեցինը բազմաթիվ ժողովուրդներ, վոք տարածված էլին Միջերկրականի ամպանում և միափորել նրանց կենտրոնացած պետություն մեջ:

Իսկյ տիրոջն են անխնայությամբ շահագործում էլին նվաճված շրջանները, դուրս էլին քաշում նրանց բոլոր նյութերը և հյուժում անտեսությունները: Հոտմը փոխարկվեց մի հակառակ պարադիալ: Նրա հզորությունը հեկում էր մեծ թիվ կազմող ստրուկների վրա:

Ռազմական բազմաթիվ ձևնարկությունների հետեփանքով, վոք մի շարք դարերի ընթացքում վարում էր այս կայսրությունները, ստրուկները բոլոր կողմերից հոտում էլին հոտմեյական կայսրության առհամները:

Սա մի իսկական ստրկատիրական կայսրություն էր: Ստրուկները հանդիսանում էլին Հոտմի կայսրության գլխավոր աղբյուրը: Սակայն ստրկական աշխատանքը չէր կարող հանդիսանալ կրթան ձևարան յերկրի անտեսություն յերկարատև զարգացման:

Գյուղատնտեսության և արդյունաբերության տեխնիկական զարգացումը հոտմեյական շրջաններում գտնվում էր համարյա քարացած միժմեկում, վոքով հետև ստրկական աշխատանքի շրջանակում չէր և չէր կարող լինել արտադրական ուժերի զարգացման բարենպաստ հոգ:

Հենց այս պատճառով էլ յերր պատերազմական անհաջողությունների հետեփանքով դադարեց ստրուկների ներհոտանքը,

յերկրի ներքուստ նախապես հասունացած տնտեսական կրթիչն էլ  
ավելի սաստկացավ ու սրվեց:

Իրությունը բարդանում էր նրանով, վոր հյուսիսից հոտմե-  
յական կայսրութեան վրա շարժվում էին գերմանական բազմա-  
թիվ ու կոպունակ ցեղեր:

Հոտմը շկարզացավ դիմանալ գերմանական ցեղերի բուռն  
զրոհին և վերջիններս աստիճանաբար կործանեցին միացյալ հոտ-  
մեյական կայսրութեանը:

Բարբ այլ պայմանները նախապատրաստեցին կայսրութեան  
քաղաքական բաժանութեանը: Բաժանումը ձևակերպվեց 395 թ.,  
յերբ հոտմեյական միացյալ կայսրութեանը բաժանվեց յերկու  
մասի—Արևմտյան, վորի մայրաքաղաքը Հոտմը մնաց և Արևելյան  
կամ Բյուզանդական (մայրաքաղաքը Բյուզանդիոն կամ Կոստանդ-  
նուպոլիսը), վորը դեռ ելի մի քանի դար պահպանում էր իր վոչ  
վորք քաղաքական ու տնտեսական հզորութեանը:

Ինչ վերաբերում է Արևմտյան Հոտմին, նա շարունակում էր  
քայքայվել թե գրոսից, թե ներսից:

Գերմանացիներն Արևմտյան հոտմեյական կայսրութեանը  
միանգամից չկործանեցին:

Մի քանի դար շարունակ նրանք պայքար էլին մղում նրա դեմ:  
Մեկը մյուսի յետևից գերմանացիների ձեռքն անցան հոտմեյական  
ճաչապատկանները և սրա հետ միասին, իրենք գերմանական ցե-  
ղերը շատ բան յուրացրին հոտմեյական կուլտուրայից:

Մոտավորապես 5-րդ դարի սկզբին հոտմեյական կայսրու-  
թյունն իսորա կործանվեց: Նրա ավերակները վրա սկսեց կառուց-  
վել նոր կյանք, ձևավորվեց հասարակական մի տնտեսակարգ,  
վորը հայտնի յե ֆեոդալիզմ տնտնով:

Այս հասարակարգը միայն 8-9 դարերում էր, վոր վերջնա-  
կանապես ձևակերպվեց:

Արևմտա-բյուրոպական ֆեոդալիզմը յերկու կուլտուրաների  
փոխազդեցութեան հետևանքը հանդիսացավ—հոտմեյական և  
գերմանական:

Հասարակական դարգացման տեսակետից, հոտմեյական կայս-  
րութեան անկումը պիտի համարել նշանակալի չափով հետ քայլ,  
քանի վոր այդ անցումը հասցրեց փոխանակութեան կազմերի անկ-  
ման և ավելի փակ տնտեսութեան, վորն իր տիպով մոտենում  
էր բնատնտեսութեանը:

Իսկ գերմանացիների հին կենցաղի նկատմամբ այդ հանդի-

անում էր՝ դարգացման ավելի բարձր աստիճանի անցնել, ավելի  
աշխուժացած ապրանքաշրջանառութեամբ, վոր կործանում էր  
հին տնտեսակարգը:

Գերմանացիները հին տնտեսակարգի վերակազմութեան ամե-  
նակական փաստը կայանում էր նրանում, վոր վոչնչացվեցին  
նախկին համայնական կարգերն ու փոխվեցին հողի մասնավոր սե-  
փականութեան:

Այս պրոցեսը նշանակում էր վոչ այլ ինչ, քան նոր հասարա-  
կական դասակարգերի յերեմիան դալ: Այս փաստի մեջ և ֆեոդա-  
լական եպոխոյի գլխավոր նշանակութեանը:

Վորոնք են ֆեոդալական հասարակութեան տնտեսական և  
քաղաքական կարգերի բնորոշ գծերը:

ԱՐԵՎՄՏԱ-ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՐԳԸ.

Այս եպոխոյում գլխավոր դասակարգերը—հողատերերը կամ  
ինչպես այն ժամանակ էլին կոչում «ֆեոդալները» և գյուղացի-  
ներն էլին: Այն ժամանակի համար արտադրութեան հիմնական մի-  
ջոցը հողն էր, վոր գտնվում էր հողատերերի ձեռքին, վորոնք  
սպտվելով այդ հողերից, շահագործում էլին գյուղացիներին:

Հողային հարստութեան մեծադույն մասը կենտրոնացած էր  
թագավորների և նրանց արքայականների ձեռքում: Իրանք շեզերի  
առաջնորդների և նրանց պինակիցների սերունդներից էլին:

Պատերազմը թագավորին ու նրա մտերիմներին բերում էր  
անչափ մեծ հողային հարստութեան, վորովհետև պարտվածները  
հողը շատ հաճախ հայտարարվում էր թագավորի և նրա մոտիկ  
բարեկամ գինյորականների սեփականութեանը:

Միաժամանակ կործանվում էր հողի հին համայնատիրու-  
թյունը, ըստ վորում այստեղ էլ գլխավոր տեղը բռնում էր հողի  
բունի կերպով խելը, վոր կատարվում էր գինյորական տեսակետից  
ուժեղ ֆեոդալի կողմից: Այսպիսով, բնութեան և կոլտուրայի  
ճանապարհով ստեղծվեց խոշոր հողատիրութեանը:

Այնուամենայնիվ, այն ժամանակներում դժվար էր վարել  
կենտրոնացած ավատական խոշոր տնտեսութեան: Սրան ամենից  
առաջ խանգարում էր ցածր գյուղատնտեսական տեխնիկան: Տըն-  
տեսական տեսակետից էլ այդ անմիտ կլիներ, վորովհետև գյու-  
ղատնտեսական միջերկրների այն մեծ քանակութեանը, վոր կտուայ-  
վեր դրանից, միևնույն է վոչ մի տեղ չէլին կարող սպասել բնակ-  
չութեան մեծ մասն ինքը գրավվում էր հողագործութեամբ և հաց  
գնեքու պեսը չունեք:

Ահա այս պայմաններում էր, վոր ստեղծվեց հողի բաժանման պայմանական տիրութեան պրակտիկան:

Թագավորները բաժանում էին հողի իրենց մտերիներին՝ պայմանական տիրութեան համար: Ռուսաստանում այդ կարգը կոչվում էր «նախորդերութուն» (Пожалование), իսկ պայմանական տիրութեան հանձնարման հողը՝ «նախորդութուն հող»: Արևմտյան Շեվրոտայում հարկ պայմանական տիրութեան հանձնարման կոչվում էր «բենեֆիցիա», վոր հայերեն նշանակում է «բարեգործութուն»:

Հողը տրվում էր գինեփորական ծառայութեան և մի քանի այլ «բարքի» և «աղերի» պարտականութուններ կատարելու պայմանով:

Ներքինում թագավորն իրավունք ուներ Փետրալից խելյու այն հողը, վոր արված էր պայմանական տիրութեան, յեթե նա չէր կատարել գինեփորական ծառայութեան և այլ պարտավորութուններ պայմանը, սակայն ժամանակի ընթացքում հողի տիրակալութունն ավելի կաշտնացավ և Փետրալը դարձավ հողի խելյական սեփականատեր, վոր իրավունք ուներ տիրելու այն ցմահ, հանձնել այն ժառանգներին, նույնիսկ ծախել:

Սովորաբար Փետրալներն ստանալով պայմանական տիրութեան համար հող, նույն պայմաններով իրենց հերթին այն նվիրում էին ավելի թույլ ու վոչ հարուստ հողատերերի:

Յերբեմն այդ ձևերեկերը հանձնարման կրկնվում էր մի քանի անգամ և վերջին հաշիվով կազմվեց մի յուրատեսակ Փետրալական սանդուխք, վորի ստիճաններն վրա տեղավորվեցին զանազան հարստութեան և զանազան հղորդութեան տեր Փետրալներ:

Այդ սրինակ սանդուխքն անվանում են Փետրալական յերարբխա: Արևմտյան Շեվրոտայում այդ յերարբխան սովորաբար հաշվում են հինգ — 1) Թագավորներ, 2) իշխաններ, հերցոգներ և դրաֆներ, 3) իշխանապուստներ և վիկոնտներ, 4) բարոններ և 5) սինյորներ: Սանդուխքի բարձր ստիճանին կանգնած Փետրալները համարվում էին «սինյորներ», իսկ նրանցից ցածր կանգնածներն ու կախում ունեցողները՝ «վասալներ»:

Գյուղացիութեան դրութեան մեջ ևս չկար միաձևութուն: Պատահում էին ազատ գյուղացիներ, վոր ունեյին իրենց հողատերեր, բայց նրանց մեծ մասը կամ սահմանափակված էր իր ապաստութեան մեջ կամ բարբոտվին ճարտացած էր:

Գյուղացիութեան դրութեանը շատ ծանր էր: Նրանք չէին

վում էին ամեն տեսակի պարտականութուններով ու զրկանքներով:

Ամենից առաջ նրանք վճարում էին հողատիրոջը բեյզաս, այսինքն՝ հանձնում էին իրենց հավելյալ մթերքի վորոշ մասը, բերքի վորոշ բաժինը, բնասելի անասունների և թռչունների ամուսնից վորոշ քանակ և այլն:

Գյուղացիները կրում էին կտուր, այսինքն՝ հողատիրոջն էլ չէր սալիս իրենց հավելյալ աշխատանքի մի մասը: Նրանք պարտավոր էին ամսվա կամ չորսթիվա վորոշ սրեր աշխատել կալվածատիրոջ համար:

Բացի վերոհիշյալը գոյություն ունեյին արիչ բազմատեսակ հարկեր ու պարտավորութուններ, վոր ստանում էին գյուղացիները և արիչ շատ արտոստութեաններ, վոր ունեյին հողատերերը:

Պորձը վատվարանում էր նաև նրանով, վոր գյուղատնտեսական տեխնիկան չախադանց ցածր էր: Նույնիսկ ամենալավ սարքիներին, հացը հաղիվ բախարարում էր ամբողջ տարվա համար: Նվազ բերքը զուգորդվելով պաշարի բացակայութեանը, բերում էր խոշոր արհավիրք—սով:

Փետրալական եպիսոպոսի ազրարային կարգերի յուրահատկութունը կայանում էր վոչ միայն հողատերերի և գյուղացիութեան դասակարգային չտիսհարաբերութեան, այլև ազրարային, կալվածքային կազմի մեջ: Վերջինս սովորաբար կոչվում է «կալվածքային» կամ «մենորալ» (անգլերեն «մենոր» բառից, վոր նշանակում է կալվածք): Կալվածքային անտեսութեանը խոշոր հողատիրութեան և մանր գյուղատնտեսութեան մշակույթի միացումն է, վորի մեջ գերիշխողը անտեսութեան փակութեան ու բնականութեան բնույթն է:

Արևմտյան Շեվրոտայում հողատերերը Փետրալից մի ամենազարգացած չըջանում (10—11-րդ դար), հազվադեպ անգամ էր, վոր վարում էին իրենց հողի մեկ քառորդից ավելին: Սովորաբար հողը հանձնում էին գյուղացիներին և վերջում վորոշ կտու:

Փոխանակութեան թույլ պարզացումը հասցրեց այն վիճակին, վոր գյուղատնտեսա մթերքներ համարյա չուկա չեյին հանվում: Այն ամենը, ինչ հողատերն ստանում էր գյուղացիներից, գլխավորապես սպառվում էր իր ազարակում: Այս մտքով ել անվում է, վոր գերակշռում էր բնասնտեսութեանը: Իսկ փակութեանն արտահայտվում էր վոչ միայն նրանով, վոր յուրաքանչյուր արնտեսութեան ինքն իրեն էր կերակրում, այլ նրանով, վոր արդյու-

Նորերական շինվածքների նշանակալի մասը, վոր հայտնի է յին Ֆեոդարական եպոխային, նույնպէս շինվում է յին կարվածքի եւեր- սում—Քալիստոզ աղաս արհեստավորների կամ ճորտ արհեստա- վորների կողմից:

ԲԱՂԱՔՆԵՐԻ ԴԵՐԸ ՁԵՆՈՒԱԼԱԿԱՆ ԵՊՈՅԱՅՈՒՄ.

Այնուամենայնիւ միանգամայն սխալ էլլիներ Ֆեոդալիզմի և պոխան պատկերացնել բնատնտեսութեան լրիւ տիրակալութիւն և վերեւ վոխանակութեան բացարձակ բացակայութիւն.

Ֆեոդալական եպոխայում՝ դոյութիւն ունէին քաղաքներ, վորոնք սաղմ հանդիսացան արդշունարեքական արտադրութեան և փոխանակութեան: Կարելի չէ տարբերել Ֆեոդալական եպոխայի յերկու տիպի քաղաքներ: Խոշոր քաղաքներ, վորոնք վարում էին միջագոյային մեծ առևտուր և սովորաբար դանդում էին նախար- կելի մեծ գետերի կամ ծովերի ափին և փոքրիկ, չըջանային էջա- նակութիւն ունեցող քաղաքներ, թույլ գորգացած առևտրով, վոր հանդիսանում է յին գլխավորապէս արհեստային արտադրու- թեան կենտրոններ:

Խոշոր քաղաքները դրամական շրջանառութեան կենտրոններ էին: Այստեղից փողերն անցնում էին նաև փոքրիկ շրջանային քաղաքներն ու կարվածատիրական աղաքակները:

Դրամների մուտքը կարվածատիրոջ անտեսութեան գործաու- նութեան մեջ, վերջինիս դրդեց բնահայրն ու այլ պարտականու- թիւնները վերածել գրամականի, իսկ այս հանդամանքն իր հեր- թին հարկադրեց գլխաւորներին հնարավորութիւններ վորոնել հացը փածատելու և փող ձարելու, վոր փձարի հարկերն ու բազ- մապիտի սուրբերը:

Բարբոսին այլ դեր է յին խաղում մանր շրջանային քաղաք- ները: Նրանք հանդիսանում էին կարաններ, ուր կարելի չէր հաց վաճառել, բանի վոր այդ քաղաքներում կենտրոնացած էր ար- հեստավորական «խտայն» բնակչութիւնը: Մանր քաղաքները դոյդանտեսական միջերկրների վաճառման շուկաներ էին: Տըվ- յայ դեպքում այդ քաղաքների դերն ափելի մեծ էր լինում, յերբ նրանք շատ թե քիչ խիտ էին ու իրար մոտ: Ամեկ քաղաքային կյանքի գորգացում ապրող յեկրներում, որինակ՝ Անգլիայում, Յորանսիայում և Գերմանիայում, ուր Ֆեոդալական եպոխայում քաղաքներն իրար մոտ էին դեռեղված՝ բնդամներ մի բանի տա- նյակ կիտմետը, բնատնտեսութեան քայքայումը դնաց արագըն- թաց քայլերով: Այն տեղերում, ուր քաղաքներ քիչ կային, ինչ-

պէս՝ Ռուսաստանում, բնատնտեսութեանն ափելի յերկազ տե- վեց:

Մենք արդէն ասացինք, վոր քաղաքներն արհեստային ար- տադրութեան կենտրոններ էին:

Այժմ տեսնենք, թե ինչպիսին են այդ ձեւի արդշունարեքական արտադրութեան բնորոշ գծերը:

Ինչպէս ցույց է տալիս ինքը «արհեստ» բառը (սուղ ասում է յին ձեռնարհեստ), այստեղ աշխատանքը կատարվում է բացա- ուսպէս ձեռքով, առանց մեքենայի կիրառման: Աշխատանքի տեխ- նիկական պայմաններն աչքի չեն ընկնում մեծ հետամնացու- թեամբ: Աշխատանքի միջոցները կատարելագործվում էր վերին աստիճանի դանդաղ և սերնդե-սերունդ արհեստավորներն ոգար- վում են նույն, սովորաբար շատ պարզ գործիքներով:

Սակայն դրա փոխարեն բարձրանում ու հսկայական կատա- րելագործման են հասնում առանձին վարպետների ձարպկութիւ- նըն ու արվեստը: Սովորաբար վարպետներն աշխատում են, ոգա- վելով յենթավարպետների և աշակերտների աշխատանքից, սու- կայն շնայած դրան, արհեստանոցի ներսում մենք հագվողեպ ենք հանդիպում շատ թե քիչ լայն գորգացած աշխատանքի բաժան- ման:

Բարդ չեն նաև առանձին արհեստային սոցիալականութիւն- ների մեջ յիղած աշխատանքի բաժանումները— վորոշ արհեստա- վորներ պատրաստում են մանվածք, մի այլ խումբ գործվածք, մի յերբորդ խումբ հենքում է մահուղ և այլն: Այսպէս են արհեստի տեխնիկական պայմանները:

Արհեստավորի տնտեսական գրութիւնը բնորոշ է նրանով, վոր նա իր գործադրած արտադրական միջոցների տերն է: Հա- ձախ նրան և պատկանում նաև նյութը, թեև յերբմն աշխատան- քը կատարվում է նաև պատվիրողի նյութի վրա:

Շատ բնորոշ է, վոր արհեստավորն ինքնուրույն, առանց մի վորեւ միջնորդի մատնակցութեան, հասցնում է իր պատրաստա- ներն սպառողին:

Հետաքրքրական է հիշատակել վարպետի, յենթավարպետի ու աշակերտի յուրատեսակ փոխհարաբերութիւնները: Այս նման չէր գործարանատիրոջ դեպի բանվորներն ունեցած վերաբերմուն- քին: Ամենադիտավորն այն էր, վոր աշակերտները, յենթավար- պետներն ու վարպետները սովորաբար դանդում էին նույն կենցաղային պայմաններում: Աշխատում էին մեկ շենքում, հա- ձախ սպրում էին նույն տան մեջ, ուտում էին մեկ ամսեպից,

մխասին մասնակցում էլ յին տնտեսական խնջույքներին և մխասին ել աշխատանքի անցնում:

Այժմ որպիսի աշակերտներն աշխատում էլ յին միայն սննդի և բնակարանի համար, աշխատավարձ չե յին ստանում, իսկ յերբեմն ուսման վարձ էլ յին վճարում: Յենթավարպետները, բայցի սննդից ու բնակարանից, ստանում էլ յին հասի փոքրիկ աշխատավարձ:

Յուրաքանչյուր աշակերտ հիմքեր ունի փաստակույ, վոր ժամանակի ընթացքում կբառնա յենթավարպետ, իսկ վերջում էլ յին բնաւոր յն վարպետ: Այն ժամանակներում տարածված սեփականութունը յենթավարպետներին և վարպետների աղջիկներին միջև թեկնացնում էր այդ անցումը և աղելի ևս ոճանդակում այն բանին, վոր արհեստավորական միջավայրում վերանա տնտեսական հակասութունները սրութունը, ուրեմն և դատակարգային պայքարը:

ՖԵՆՈԴԱԼԱԿԱՆ ԵՊՈՒՍԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԸ:

Այժմ անցնենք Ֆեոդալական եպոխայի բաղադրական կազմի հարցին: Հասարակութան դատակարգայնութան անցնելը բերեց շատ կարևոր հետեւանքներ:

Վերեւում մենք տեսանք, թե ինչ ծանր դրութան մեջ էր Ֆեոդալական դյուրացիութունը:

Այնուամենայնիվ սխալ կլիներ մտածել, թե դյուրացիութունն անարտուճ կերպով տանում էր այն բոլոր զրկանքները, վոր ծնունդ էլ յին Ֆեոդալական տնտեսակարգի: Հուսահատութան համեմտով, նրանք վոչ հաղվաղեալ անգամներ ձգտում էլ յին դեն շարտել իրենցից տերերի ծանր լուծը:

Այստեղ և այնտեղ բռնկում էլ յին դյուրացիական տարերային ապստամբութուններ: Բայց դյուրացիները կազմակերպված չե յին, չե յին կարող ծրագրված պայքար մղել, չունենին զենք:

Այս պատճառով էլ Ֆեոդալներին դժվար չէր ճնշել ամեն մի դյուրացիական ապստամբութուն և այս նրանք կատարում էլ յին ամենայն դաժանությամբ:

Այսպիսով Ֆեոդալների տնտեսապես տիրող դատակարգը գենքի ուժով ամրացրեց իր իշխանութունը: Վարպետի դյուրացիութանը հնազանդ պահեն, Ֆեոդալներն ստեղծեցին հարկադրանքի հաստիկ կազմակերպութուն: Այսպես առաջացան պետական արարատի առաջին սաղմերը: Ֆեոդալներն իրենց ձեռքում ունենին զինված ուժ, նրանք իրավունք վերապահեցին դատապատմել յենթարկել իրենց հարստակ բնակչութունը, նրանք հարկ էլ յին հա-

վաքում, դրամ կտրում, մի խոսքով անում էլ յին այն ամենը, ինչ հետադայում աղելի ուրույն և բարդ ձևերով արվում էր կապիտալիստական պետութան կողմից:

Յուրաքանչյուր Ֆեոդալ հանդիսանում էր ինչ վոր մի տեսակ թագավոր իր մարդի դյուրական բնակչութան համար:

Ճեռալը, վորքան բարձր էր կանգնած Ֆեոդալական յերար-իւիայում, նույնքան էլ նա նմանում էր միահեծան թագավորի:

Սոչոր Ֆոդալներն անկախութան այդ բաժինն ստացան վոչ միայն թագավորների իշխանութունից հոժարակամ հրաժարվելու շնորհիվ: Այդ հնդի վրա ամենուրեք ծագում էլ յին խիստ կռիվներ, վոր վախարկվում էր կատարյալ պատերազմի:

Յերբեմն աղելի խոչոր Ֆեոդալներին հաջողվում էր ազատվել թագավորից ունեցած բոլոր տեսակի կախումներից:

Որինակ՝ Յրանախայում 10-11-րդ դարերում թագավորը համարյա ամբողջապես կորցրեց իր իշխանութունը հոգուտ մի քանի աղղեցիկ դրաֆներին: Ուրիչ դեպքերում թագավորները թեե պահում էլ յին իրենց նշանակութունը, բայց հարկադրված էլ յին իրենց Ֆեոդալներին տալ զանազան յրաչխիքներ, վոր ապահովում էլ յին թագավորական վասալների բոլոր տեսակի Ֆեոդալական իրավունքները:

Ճեռալները պայքարը թագավորների դեմ բարդացավ նոր խոր հակասութուններով, վոր հանդես յեկան Ֆեոդալների տարբեր խմբավորումների մեջ: Ճեռալների ստորին խավերը, սակավահող և դյուրական աշխատավոր ձեռքերի կարիք զղացողները հեշտությամբ անցնում էլ յին թագավորների կողմը, այն հուսով, վոր մեծ Ֆեոդալներից հող կխլեն:

Հետագայում այդ դատակարգային պայքարում շատ դործոն մասնակցութուն ունեցավ մի այլ ուժ ևս — առևարական կապիտալը, բայց պայքարի այդ փուլի մասին մենք կխոսենք պատշաճ տեղում, իսկ այժմ կանդ առնենք Ֆեոդալական եպոխայի յեկեղեցու դրութան բնութագրման վրա:

ՅԵԿԵՂԵՑԻՆ ՖԵՆՈԴԱԼԱԿԱՆ ԵՊՈՒՍԱՅՈՒՄ

Պատակաված պետական իշխանութան դատակարգային պայքարի յեկեղեցին:

Քարի սրված պայմաններում, շատ մեծ նշանակութուն ձեռք բե-

ցկեղեցին ինքը խոչորագույն հողատերն էր: Իրենց հողային հարստությամբ նրա հետ կարող էլ յին համեմատվել միայն թագավորներն ու կայրները:



5077-8

11-րդ աղբուրում Արևմտյան Յեզուական կաթոլիկ յեկեղեցու հարստութիւնը կազմում էր վողջ Ֆեոդալական ունեցվածքի վիսից ավելին: Հարուստ վանքերն ու յեկեղեցական իշխանները նման աշխարհիկ Ֆեոդալների բաժանում էին իրենց հողը պայմանական տիրութեան:

Բայց յեկեղեցին, վոչ միայն հարուստ կալվածատեր էր, այլև խոշոր առևտրական ու վաճխաւու: Արդեն հռոմեական կայսրութեան ժամանակ նա ընդգրկվել էր առևտրական շրջապատւոյ մեջ և հետագայում Ֆեոդալական վողջ եպոխայի ընթացքում պահում էր նշանավոր դեր, վորպես առևտրի տարածող:

Այդ իսկ պատճառով դարմանալի չէ, վոր յեկեղեցին հանդես է գալիս այդ ժամանակ վորպես առևտրի պաշտպան, հանուն առեւտրականների շահերի: Մասնավորապէս Ֆեոդալական բազմաթիւ պատերազմների, կողոպուտների, ասպատակող արշավների շրջանում կաթոլիկ յեկեղեցին ձգտում է սովորութիւն դարձնել «ատածու աշխարհում», վորը վերցնում էր հատուկ պահպանութեան ներքո յեկեղեցական ունեցվածքները: Ճանապարհորդող վաճառականութեանը նույնպէս արդելում էր բոլոր տեսակի պատերազմական գործողութիւնները, վորոչ ժամանակի ըթնացքում (չօրաթ գիշերվանից մինչև յերկուշաբթի առավոտը, խոշոր աստրերին կամ մեծ պատերին և այլն):

Տնտեսական նշանակութեան հետ միասին յեկեղեցին բարձրացնում էր նաև իր քաղաքական դերը: Յեկեղեցական Ֆեոդալները կանգնած էին Ֆեոդալական յերարխիայի ամենարարձր աստիճանին: Կաթոլիկ յեկեղեցու զլուխը — պապը մրցակցում էր աշխարհիկ թագավորների իշխանութեան դեմ: Հոգեվորակոնսթիտուցիոնն ամենուրեք ոգտվում էր ամեն տեսակի արտոնութիւններով, հարկային, դատական և այլն:

Ի վերջո անհրաժեշտ է հիշատակել նաև յեկեղեցու իրենու գիական նշանակութիւնը: Նա ամբողջովին իր ձեռքումն էր տալում հասարակութեան հոգևոր կյանքը: Գիտութիւնը, գրականութիւնն ու արվեստը — բոլորը գտնվում էին յեկեղեցու խնամակալութեան ներքո: Ժողովրդի լայն մասսաները գտնվում էին կրոնական իրենորդիայի իրակատար գերութեան մեջ և հոգեվորականութիւնն աշխարհիկ Ֆեոդալների հետ միացնելով խոշոր ու սուրբ, հաջողութեամբ ոգտվում էր կրոնական հաշիշից, վոր-

պեսզի գյուղացիական մասսաները պահեն հարկադրանքի տակ և յենթարկեն ամեն տեսակի դաժան շահագործման:

Այս պատճառով ել դարմանալի չէր, վոր Ֆեոդալական կառավարութիւնն ամեն կերպ ոժանդակում էր յեկեղեցու հեղինակութեանը: Փոքրիկ փորձ՝ նահանջելու յեկեղեցու դոգմաներից (ուսումնքի հիմանկան կետերից), հետապնդվում էր դաժանորեն: Ստեղծված էր մինչև իսկ հատուկ կազմակերպութիւն — ինկվիզիցիա, վորն առանձնապէս դաժանութեամբ պայքարում էր հերետիկոսների, այսինքն՝ տիրող յեկեղեցու դեմ հանդես յեկած բոլոր շարժումների դեմ:

Մեզ մնում է մի քանի խոսք ասել քաղաքային կյանքի կազմակերպման մասին:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Քաղաքները վորոչ չափով կանգնած էին Ֆեոդալական պետութեան ընդհանուր սահմանից դուրս, վորը կառուցված էր գլխավորապէս հողային հարաբերութիւնների հիման վրա: Սկզբներում քաղաքները գտնվում էին Ֆեոդալ տերերից կախման մեջ, բայց նրանք շատ շուտ կարողացան անկախութիւն ձեռք բերել: Այդ բանին մեծ չազով նպաստում էր քաղաքային բնակչութեան յուրահատուկ կազմակերպութիւնը, վոր վաճառականներին միավորում էր «գիլդի», իսկ արհեստավորներին «ցեխերի» մեջ:

Վաճառական գիլդիների ստեղծման համար հող էր պատրաստում նրանց առևտրական միացալ ձեռնարկումները:

Այն ժամանակներում ճանապարհորդութիւնն ուղեկցվում էր մշտական կողոպուտների ու հարձակումների վտանգով, վոր կատարվում էր ավազակների կամ իրենց իսկ Ֆեոդալների կողմից, վոր այնքան ել հեռու չէին հեշտ վաստակ ձեռք բերելու հակումից: Այս հանգամանքն ստիպում էր վաճառականներին ստնավաճառ դնալիս կամ առևտրական այլ ձեռնարկումներ կատարելիս մենակ չմեկնել, այլ ամբողջական քարավաններով և ծովային ու գետային նախամբերով ուղեւորվել առևտրի վայրերը: Այսպէս առաջացան վաճառականական առաջին կազմակերպութիւնները: Հետագայում գիլդիներն սկսեցին իրենց վրա վերցնել վաճառականների առևտրական սովորական գործառնութիւնների համար դանազան ձևերի ոժանդակութիւնները: Ավելի ուշ նրանք սկսեցին ցալաքարել մրցակցութեան դեմ և իրենց վրա վերցրին փոքրորդութեան դարձը՝ ոժանդակութիւն ցույց աւելով իրենց տն-

գամներին նավաստարտակումների, հրդեհների, կողոպուտի և այլ դեպքերում: Ի վերջո գիլդիները նշանավոր դեր խաղացին նաև քաղաքների քաղաքական կյանքում: Այս սկզբնային նրանով, վոր գիլդիներն իրենց անդամներից հարկը հավաքեցին Փետրալների օգտին:

Ինչ վերաբերում է արհեստավորների կազմակերպություններին—ցեխերին, սրանք էլ շատ կողմերով նման էին վաճառականական գիլդիներին: Ցեխերի գլխավոր խնդիրն էր առանձին արհեստավորների միջև վերացնել մրցությունը և ստեղծել տրվյալ ցեխի համար բացառիկ տիրապետություն քաղաքային շուկայում: Այս նպատակով ցեխային կազմակերպությունները մշակել էին բազմաթիվ կանոններ (այսպես կոչված՝ «ցեխային կանոնադրություններ»), վորոնցում մանրակրկիտ կերպով կարգավորվում էին արտադրության բոլոր փուլերը, արտադրանքի հասկություններն ու վորակը և սրանց սպառման պայմանները: Նրանք գիլդիների հետ միասին մասնակցում էին քաղաքային ինքնավարության կազմակերպմանը և հանդիսանում էին արհեստավորների շահերի պաշտպանության ներկայացուցիչ այն Փետրալների դեմ, վորոնք վարում էին այս կամ այն քաղաքը: Ցեխերն ու գիլդիները միաժամանակ մասնակցում էին իրենց անդամների կրոնական կյանքին: Նրանք կազմակերպում էին կրոնական տոներ, ունեյին յեկեղեցիներ և այլն: Վերջին հաշվով ցեխերն ու գիլդիներն էին, վոր իրենց ձեռքում պահում էին Փետրալական քաղաքի վողջ հասարակական կյանքը:

Քաղաքների ծաղկումը Փետրալների համար շատ շահեկան էր, այս պատճառով էլ նրանք քաղաքներին տալիս էին ամեն տեսակի արտոնություններ, վորոնք կարողանան նպաստել քաղաքի տնտեսական շրջանառության լայնացման: Պատահում էր, վոր քաղաքներին հաջողվում էր, վորոչ հարկ վճարելով, միանգամայն ազատվել Փետրալի միջամտությունից: Յերբեմն էլ ծաղում էր կատարյալ ղինյալ պայքար: Շատ հաճախ դործը վերջանում էր նրանով, վոր քաղաքն ստանում էր վորոչ քաղաքական անկախություն, հազվադեպ էր լինում, վոր մի վորևե քաղաք իսպառ ազատի Փետրալի ազդեցությունից և դառնա միանգամայն ինքնավար կենտրոն:

## ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հասարակության պատմության հետագու զարգացման ընթացքում մեծ դեր խաղացին քաղաքները: Մենք արդեն տեսանք, վոր խոշոր առևտուրն առանձնապես զարգացավ այն քաղաքներում, վորոնք գտնվում էին ծովերի կամ նավարկելի գետերի ափերին, այսինքն՝ ուրիշ խոսքով աճած հաղորդակցության հարժար ճանապարհների վրա: Արևմտյան Յեվրոպայում միջնադարյան առևտրի ամենահին կենտրոնը Միջերկրականի ավազանն էր:

Այստեղ առևտուր էր կատարվում Մերձավոր արևելքի յերկրների և հյուսիս-իտալական հարուստ քաղաքների՝ Վենետիկի, Ջենովայի, Միլանի, Փլորենցիայի և այլոց (այսպես կոչված լեվանտական առևտուր) միջև:

Միջերկրական առևտրի զարգացմանը նշանավոր խթան հանդիսացան առևտրական և պատերազմական արշավախմբերը, վոր տեղի ունեցան 11-13-րդ դարերում:

«Ուաչակրաց արշավանքների» լողունըն էր «տիրոջ շիրիմի» ազատումը (Յերուսաղեմում) «պիղծ» մահմեդական ժողովուրդներին ձեռքից: Ուաչակրաց արշավանքների կազմակերպողներն էին հյուսիս-իտալական քաղաքների հարուստ վաճառականությունը, բոլոր Փետրալները և կաթոլիկ հոգևորականությունը, վորոնք ձգտում էին տիրել առևտրական ճանապարհներին, թալանել հարուստ յերկրները, հափշտակել նոր հողեր և կազմակերպել Փետրալական նոր իշխանություններ ու թագավորություններ:

Կաթոլիկ յեկեղեցին, բացի այդ, նկատի ունեյր ժողովրդի կրոնական զգայմունքները բորբոքելով, այլևի ևս ամբացնել իր հեղինակությունը: Շարժմանը մասնակցում էին մեծ թվով մանր Փետրալներ, վորոց համար պատերազմը ձեռնտու արհեստ էր:

Շարժման մեջ էին քաշված նաև քայքայված դյուղացիություն հոծ մասսաներն ու քաղաքային չքավորները, վորոնք հույս ունեյին հեռավոր յերկրներում աղատվել Փետրալական անտանելի շահագործումից ու տանջանքներից: Ուաչակրաց պատերազմների եպոխայում իտալական քաղաքների առևտրական նշանակությունը խիստ բարձրացավ:

Իտալական վաճառականներն արագ հարստացան և իրենց ձեռքումն էին պահում վողջ առևտուրն Արևելքի հետ: Ըստ վորում իտալակրաց արշավանքների նշանակությունը շտահմանավակվեց միայն Եստրալայով, այլ տարծվեց վողջ Արևմտյան Յեվրոպայի

վրա, նպաստելով առևտրի զարգացմանը, փողային շրջանառու-  
թյան ուժեղացմանը և բնաստեղծության քայքայմանը:

Այնուամենայնիվ խաչակրաց արշավանքները վերջին հաշվով  
ավարտվեցին անհաջող. Թուրքերը վերջնականապես Ասիայից  
դուրս վճռեցին «խաչակիրներին»:

Այս իսկ պատճառով խտարական վաճառականությունից խլվե-  
ցին արևելյան ամենակարեւոր շրջանները: Նման դրությունը նը-  
պաստեց Միջերկրականի առևտրի անկմանն ու առևտրական նոր  
կենտրոնների աշխուժացմանը: Այսպես առևտրական գործարք-  
ներն սկսեցին զարգանալ Հյուսիսային և Բալտիկ ծովերի ափերին:  
Այստեղ էլին գտնվում գերմանական հարուստ քաղաքները՝ Համ-  
բուրգը, Դանցիգը, Լյուբեկը և այլն: Սրանք վարում էին շատ  
լայն առևտուր և իրենց բաժանմունքներն ունեյին Լոնդոնում,  
Նովոգորոդում, և ուրիշ շատ քաղաքներում: Վերջիվերջո նրանք  
կազմեցին առևտրական հզոր միություն, վոր իր ձեռքում էր պա-  
հում Հյուսիսային Յեվրոպայի վողջ առևտուրը: Այդ, այսպես  
կոչված՝ «մեծ գերմանական «Վանդան եր»»: Նրա կազմի մեջ էլին  
մտնում մոտավորապես 90 քաղաքներ:

Ժամանակի ընթացքում կապ ստեղծվեց նաև Յեվրոպայի  
Հյուսիսային և հարավային առևտրական շրջանների միջև:

Կապակցող յերակի դերն ստանձնեց Հոնոս գետը, վորի ա-  
վաղանում ծնունդ առան բազմաթիվ առևտրական հարուստ քա-  
ղաքներ՝ Նյուրենբերգ, Քյոլն, Անալեյրպեն, Բրյուզգե և ուրիշ-  
ները:

15-րդ դարի կեսին հարավ-յեվրոպական առևտուրն ստացավ  
ևս մի շատ ծանր հարված՝ Թյուրքերը նվաճեցին Կոստանտնու-  
պոլիսն ու սեծովյան ափերը (1453 թ.) Այս նվաճումն իտալական  
քաղաքները վերջնականապես կտրեց Մերձավոր Արևելքից և ա-  
վելի դժվարացրեց առևտրական քարավանների մուտքը դեպի  
հեռավոր Հնդկաստանը: Այն ինչ Հնդկաստանը յեվրոպական վա-  
ճառականությունյան յերեվակայության մեջ պատկերանում էր, վոր-  
պես հեքիաթային հարստության յերկիր: Այդ մասամբ ճիշտ էր,  
բայց շատ բան ավելացված էր այնտեղ յեղած վաճառականներին  
կողմից: Ճանապարհների դժվարություններն անհնար էլին դարձ-  
նում պարզելու, թե վորտե՞ղ է վերջանում իրականությունը և  
վորտե՞ղ սկսվում յերևակայությունը: Թյուրքերի կողմից հին ա-  
ռևտրական ճանապարհների փակասն հետևանքով, դեպի Հնդկաստ

ան ամենակարճ ճանապարհը գտնելու աշատ հին ձգտումը դար-  
ձավ էլ ավելի հրամայական: Այն ժամանակների մարդկանց աշ-  
խարհագրական ըմբռնումները հիմք էլին տալիս նախատեսելու,  
վոր դեպի Արևմուտք շարժվելու դեպքում հնարավոր է հասնել  
Հնդկաստան՝ շրջոգարձ ճանապարհով:

Այս խթան հանդիսացավ, վոր դեպի Հնդկաստան ծովային  
կարճ ճանապարհ վորոնելու համար կազմակերպվեն դանաղան ար-  
շավախմբեր:

1492 թվին Քրիստափոր Կոլումբոսը, վոր ջենովացի յեր և իտ-  
պանական պաշտոնյա, հասավ մինչև նոր մայր ցամաքը, մի յեր-  
կիր, վոր դեռ անձանոթ էր այն ժամանակի յեվրոպացիներին: Նա  
դտավ Ամերիկան, վորին սխալմամբ Հնդկաստան համարեց:  
Բայց մի քոնի տրի անց, 1498 թ. պորտուգալացի Վասկոդե-  
Դամայի առաջնորդությամբ գտնվեց նաև իսկական Հնդկաստանի  
ծովային ճանապարհը:

Ամերիկան ու Հնդկաստանն աղբյուր հանդիսացան այն առև-  
տրական խմբակցությունների արագահոս հարստացմանը, վորոնց  
հաջողվեց առաջին իսկ հերթին կապ ստեղծել այդ յերկրների  
հետ: Յեվրոպացիները անխնայորեն կողոպտում էլին տեղական  
բնակչությանը, բռնի խլելով նրանցից այն բոլոր մթերքնե-  
րը, վոր կարելի յեր ծախել յեվրոպական շուկայում: Այդ ժամա-  
նակներում լայն ծավալում դտավ ստրկավաճառությունը, վորը  
շատ մեծ հարստություն բերեց այդ գործի մասնազետներին:

Այսպես, որինակ՝ անգլիական խոշորագույն նավահանգիստ  
Լիվերպուլը, շատ մեծ ծաղկման հասավ գլխավորապես ստրկա-  
վաճառության շնորհիվ: Այստեղ կար մի ամողջ նավատորմից,  
վոր դրաղված էր բացառապես ստրկավաճառությամբ: Անգլիա-  
ցիներեց հետ չեյին մնում հողանդացիները, իսկ այս յերկուսից  
առաջ գնում էլին պորտուգալացիներն ու ու իսպանացիները: Նոր  
հայտարեված յերկրների վոսկու և արծաթի հանքերի մշակումը  
նույնպես փոքր հարստություն չբերեց: 16-րդ դարի ընթացքում  
Յեվրոպայում կուտակվեց խոշոր չափով «ազնիվ մետաղներ»:  
Այս հանդամանքը ծնունդ տվեց յուրահատուկ «զների հեղափո-  
խություն»: Վոսկու և արծաթի գները, նրանց քանակի մեծացման  
հետևանքով շնկում էլի, այն ինչ շատ բարձանում էլին ոյլ  
աղբյուրների գները: Իսկ աշխատավոր բնակչության յեկամուտը  
շատ դժվարեց: Մնա՞լ էր համարյա անփութիս և դրա հետև

վանքով ել նրանց կենսական մակարդակն անչափ ընկել եր: Քայ-  
քաջվեցին նաև կալվածատերերը, վորոնք հողերը սովորաբար  
տալիս էյին յեկարատե կապալով ե այժմ դո՛ւմի արժեքի անկ-  
ման հետևանքով, իրենք ել ընկնում էյին վերին աստիճանի ծանր  
դրության մեջ: Սակայն ազնիականության ողջատայն մն ու  
բնակչության մնացած շատ խմբերի կործանումն ըի հետ բերեց  
վաճառականության արագորեն հարստացում: Այն որվանից, յերբ  
վաճառականությունն ընդունեց խոշոր միջնադրային բնույթ, դրա-  
մական շրջանառությունն սկսեց թափանցել Յելրոպայի բոլոր  
անկյունները: Այժմ վաճառականությունն սկսեց յերկրի ամառ-  
սական կյանքում խոշոր դեր խաղալ: Հասկայես մեծ նշանակու-  
թյուն ընդունեց վաշխառությունը, այսինքն «փողի առևտուրը»: Այս  
յերևույթը ծնունդ առավ փողի շրջանառության չափադանց  
արագ տարածման և փողի ընդհանուր պահանջ դառնալու հետև-  
վանքով:

Արտադրության չափերի լայնացման պայմաններում փող եր  
հարկավոր արհեստավորին, վոր մեծ քանակությամբ հումույթ  
գնի, փող եր հարկավոր և հողատիրոջը, վոր վարժվել եր արդեն  
քաղաքի կյանքի «հրաշալիքներին», փող եր հարկավոր նույնիսկ  
գյուղացուն, վորն այժմ բոլոր տեսակի հարկերն ու պարտավո-  
րությունները հողատիրոջը վճարելու յեր դրամով: Այս բոլորը  
հող ստեղծեցին վաշխառության զարգացմանը, իսկ այս վերջինն  
իր հերթին մեծ հարստություն բերեց այն վաճառականներին, վո-  
րոնք դրաղված էյին «փողը աճման» համար տալու գործով:

Վորպես փողի շրջանառության զարգացման հետևանք հան-  
դես յեկավ «սեղանավորների» հատուկ պրոֆեսիա, ոտանց վորոնց  
այն ժամանակներում հնարավոր չեր գործարք կատարել. վորով-  
հետև Ֆեոդալական կարգերի ժամանակներից ամենուրեք պահ-  
պանվում եր դրամական սխտեմի վերին աստիճանի բաղձապի-  
սություն և անկայունություն:

Հետագայում սեղանավորները դարձան բանկիրներ, վորոնք  
ամենից առաջ գրադվում էյին դրամ տեղափոխելու, իսկ վերջում  
վարկավորման ու դրամական այլ գործարքներով:

Վաճառականները, բանկիրներն ու վաշխառուները դարձան  
հասարակական ամենահարուստ դասակարգ: Փլորենտական հա-  
րուստներ Մեդիչիները 15-րդ դարում տիրում էյին մի ունեց-  
վածքի, վոր հավասար էր առնվազն 15 միլ. ուլբլու, իսկ դերմա-

նական ֆուգերների առևտրական ու բանկիրական տունը 100 առ-  
բուց հետո, 16-րդ դարի կեսերին արդեն ունեւր 75 միլ. ուլբլի:

Այսպես էյին առևտրի և փողային շրջանառության զարգաց-  
ման ճանապարհները:

Առևտրական կապիտալն առաջանում եր Ֆեոդալական հարա-  
բերությունների հողի վրա:

Նա արդյունք ե հանդիսանում այն պրոցեսների, վորոնք հա-  
տուկ են Ֆեոդալական Փորձացիային:

Ֆեոդալիզմի ժամանակ արտադրական ուժերի զարգացման  
հիմնական ճանապարհները դնում էյին վոչ տեխնիկայի բնադա-  
վառում:

Տեխնիկայի անշարժության միջոցին, արտադրական ուժերի  
զարգացումն արտահայտվում եր աշխատանքի հասարակական  
բաժանման բարձրացման ձևով:

Արհեստի առանձնացումը գյուղատնտեսությունից, քաղաքի  
զատումը գյուղից և միաժամանակ սրանց միջև փոխանակության  
կապի բարձրացումը, հանդիսանում էյին Ֆեոդալական հասարա-  
կության արտադրական ուժերի զարգացման էյական հատկանիշը:

Այս հիմնաչենքի վրա, Ֆեոդալական արտադրության ձևի և  
նրան հատուկ արտադրական ուժերի վրա աճում ե առևտրական  
կապիտալը:

Առևտրական կապիտալը լիակատար կերպով ընդգրկում ե  
ապրանքային շրջանառության (փոխանակության) վողջ պրոցեսը:

«Քայքայելով Ֆեոդալիզմին հատուկ բնատնտեսական հարա-  
բերությունները, բարձրացնելով տնտեսության ապրանքայնու-  
թյունը, փոխարինելով Ֆեոդալական եպոխայի փակ շրջանային  
չուկան լայն ազդային շուկայով, առևտրական կապիտալը համա-  
կենտրոնացնելով դրամական միջոցները, ստեղծում ե կապիտա-  
լիստական հարբերությունների հաստատման համար կուռ նա-  
խադրյալներ»:— «Վոչ մի կասկած չկա— ասում ե Մարքսը, վոր  
16-րդ և 17-րդ դարերում աշխարհագրական հայտարերումներից  
հետո, առևտրի ասպարիզում կատարված մեծ հեղափոխություն-  
ները և վաճառականական կապիտալի հետագա արագընթաց առաջ  
խաղացումը գլխավոր տեղ են գրավում այն մոմենտների շար-  
քում, վորոնք նպաստեցին անցումն արտադրության Ֆեոդալա-  
կան յեղանակներից կապիտալիստականին»:

Առևտրական կապիտալն սկսում ե ազդեցություն ցույց տալ  
նաև արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության  
եկամամբ:

Քայլ այդ ազդեցութիւնը միշտ ել միատեսակ չէ: Պատմական վորոշ պայմաններում առևտրական կապիտալը ինքը չթափանցեալ արտադրութեան մեջ, պահպանողականացնում եր արտադրութեան Ֆեոդալական հին յեղանակները, իսկ այլ պայմաններում նա հեղափոխականացնում ե արտադրութիւնը: Ինքը թափանցում ե վերջինի մեջ, բոտ վորում դառնում ե առևտրական կապիտալից արդշունարերական կապիտալ: Նույնը պեաք ե ասել նաև դշուղատնտեսութեան նկատմամբ:

Վորոշ դեպքերում առևտրական կապիտալը պահպանողականացնելով արտադրութեան Ֆեոդալական յեղանակը, հող ե պատարտում ճարտարութեան ուժեղ դարդացմանը, այլ դեպքերում նա ոժանդակում ե Ֆեոդալական բոլոր ձևերի կործանմանն ա կապիտալիստական արտադրութեան յեղանակի հաստատմանը:

Տեսնենք, թե ինչպես նոր պայմաններում փոխվեցին արդշունարերական արտադրութեան ձևերը ե ինչպես վերածնվեց աղբաբային կարգը:

ԱՐՀԵՍՏԻ ՔԱՅՔԱՅՈՒՄՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՁԵՎԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Առևտրական կապիտալը արտադրութեան հին արհեստային ձևին բերեց լիակատար քայքայում:

Արհեստը քայքայվում եր մի մի քանի ուղղութեամբ:

Ամենից առաջ արհեստավորները ընկնում եյին առևտրականների ազդեցութեան շրջանը: Նախնական ժամանակներում, յերբ շուկան մեծ չեր, արհեստավորները հեշտութեամբ կկարողանային հաշի առնել բնակչութեան պահանջները:

Շուկայի լայնացման հետ միատին բարձրացավ նաև արտադրութեան չափը ե այդ հանդամանքը հաճախ արհեստավորներին զնում եր այնպիսի վիճակի մեջ, վոր նա շատ դեպքերում արտադրում եր ավելին, քան ինքը կարող եր վաճառել: Չունենալով պահեստի միջոցներ, արհեստավորն ընկնում եր դժվարին կացութեան մեջ ե ստիպված գիմում եր վաճառականի կա վաշխառուի գրամական ոժանդակութեանը:

Իրանից սգալում էյին առևտրականները, վորոնք աննշան գնով առնելով արհեստավորի ապրանքները, հույս ունեյին ծախելու այդ մի ուրիշ տեղում կամ հենց նույն վայրում, բայց ավելի բարձր գնով:

Ժամանակի ընթացքու այդ որինակ վաճառքը դարձավ ավել-

յի սովորական յերևույթ: Հետագայում առևտրականը արհեստավորին մատակարարում եր նաև հումույթ ե գրանով իսկ նրան ավելի յեր յենթարկվում իր ազդեցութեանը:

Վարպետների, յենթավարպետների ու աշակերտների փոխաբարութեան փոփոխումն իր հերթին տանում եր դեպի արհեստի քայքայումը:

Ֆեոդալական հին նահապետական արհեստի պայմանները առախճանաբար սկսեցին անհետանալ: Վարպետը շուկայի ճնշման ներքո ել ավելի յեր շահագործում յենթավարպետներին ու աշակերտներին, վորպեսզի ազատվի մրցումից: Վարպետներն ամեն կերպ դժվարացնում եյին նոր արհեստավորների մուտքն իրենց շարքերը, վորով ե փակվում եր յենթավարպետների ինքնուրույն դառնալու ճանապարհը:

Այս հանդամանքը խոշոր պատնեշ ստեղծեց արհեստի վարձու աշխատավորների ե վարպետ ձեռնարկատերերի միջև: Ի վերջո արհեստի առանձին բնագավառների մեջ ել հանդես յեկան տնտեսական հակասութիւններ: Պատրաստի ապրանքներ արտադրող առանձին ցեխերը դարձան մի տեսակ գնողներ այն ցեխերի նկատմամբ, վորոնք կիսաֆաբրիկատ եյին պատրաստում: Այսպես որինակ, մահուղագործները զնում եյին ջուլհակների մանվածքը, վորոնք սովորաբար գործվածքը լրիվ չեյին մշակում: Այդ գործվածքներն արտադրող ցեխերը վերջ է վերջո իրենք ել դարձան առևտրական, վորը ավելի ե ավելի արագացրեց արհեստի քայքայման պրոցեսը:

Այնուամենայնիվ ցեխային կազմակերպութիւնները դեռևս յերկար ժամանակ գիմադրում եյին արհեստի արագ քայքայման պրոցեսներին: Ստեղծվեցին արտադրութեան նոր ձևեր, վոր ավելի հարմարվում եյին շուկայի լայնացած պահանջներին, առաջ յեկավ այսպես կոչված տնայնագործութիւնը, իսկ սրա հետեվից նաև մանուֆակտուրան, — ֆաբրիկային սխտեմի նախակարապետը:

Տեսնելիական տեսակետից տնայնագործայան արդշունարութիւնը թիչ բանով եր տարբերվում արհեստայինից: Այստեղ ել աշխատանքը կատարվում եր ձեռքով, աշխատանքի ունակութիւններն ու գործիքները պահվում եյին իրենց նախկին վիճակում: Սակայն բոլորովին նոր ձևով եյին կատարվում տնտեսական հարաբերութիւններ:

Տնայնագործական արդյունաբերութեան միջոցին պատրաստի նութերի վաճառքը տեղի յեր ունենում միջնորդի ողնութեամբ, վորը դնում էր տնայնագործից ուրիշին ծախելու համար: Ըստ վորում գնորդը շատ հաճախ տնայնագործին մատակարարում էր նաև հումույթ: Այդպիսով աշխատավորը լիակատար կերպով ընկավ գնորդ-կապիտալիստի սղղեցութեան տակ:

Տնայնագործական արդյունաբերութեան միջոցին, արհեստավորները սովորաբար շատ յերկար ժամանակ պահպանում էին իրենց հին ցեխային կարգերն ու կազմակերպութեանները:

Ձեվականորեն նրանք դեռ մնում էին արհեստավորներ, բայց անտեսական տեսակետից նրանք արդեն դարձել էին տնայնագործական արդյունաբերութեան աշխատավորներ, վոր աշխատում էին գնորդ-կապիտալիստի համար:

Գյուղացիական պարտականութեանները խողով փոխարինելը և առհասարակ նրանց շուկայական հարաբերութեանների մեջ գլորավելը բարենպաստ հող պատրաստեցին՝ գյուղում ոժանդակ արդյունաբերութեան արտադրութեան զարգացմանը:

Հողասակավութեանն ու գյուղատնտեսական շատ ցածր տեսակի, թույլ չեցին տալիս գյուղացուն հողից վերջինը այն ամենը, ինչ նրան անհրաժեշտ էր, թե սնվելու և թե ամեն տեսակի վճարումների համար:

Այս ևս իր հերթին հեշտացնում էր գնորդների արդյունաբերական արդյունքների արտադրութեան կազմակերպողների գործը:

Յեվ այսպես՝ գյուղը տնայնագործական արդյունաբերութեան հայրենիքն էր:

Սակայն արդյունաբերութեան այդ ձևով զարգացումն էլ գտնով իր տեղը:

Յեխերը գործան շատ էլին կորցնում իրենց նշանակութեանը, այնքան շատ էր տարածվում քաղաքային տնայնագործական արտադրութեանը:

Անհրաժեշտ է նշել, վոր տնայնագործութեանը սովորական ընդունեց լայն ծախսարումն: Մի քանի դարերի ընթացքում, մասնավորապես 15-16, 17 և 18-րդ դարերում, տնայնագործութեանը հանդիսանում էր արդյունաբերական արտադրութեան գլխավոր ձևերը:

Արդյունաբերութեան զարգացման հաջորդ փուլը հանդիսանում է մանուֆակտուրան: Նա շատ բաններով և ասարեբարձում արդյունաբերութեան նախընթաց ձևերից:

Ամենից առաջ մանուֆակտուրայի միջոցին արտադրութեան այլ կազմակերպում կար: Այստեղ աշխատավորները հասկացվում են ընդհանուր շննքի մեջ, վոր պատկանում է ձեռնարկատեսակերին: Մանուֆակտուրայում աշխատում էին մի քանի տասնյակ բանավորներ, բայց պատահում էին նաև այնպիսի ձեռնարկութեաններ, ուր բանավորների թիվը հազիվով էին հարյուրներով:

